

## ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱԻԻԹԸ \*

(Դիցազնական վէպ)

### VIII

Ելաւ, Դաւթի մօտ գընաց Օհանը,  
— Հը, Դաւթի, ասաւ, ո՞նց է քո բանը;  
— Հօրեղբայր, ասաւ, շատ է դըժար բան.  
Կեռ-կեռ պողաւոր մալերը որ կան՝  
Խելօք են, ամա էն անպող մալեր  
Ցրուեցին, փախան ողջ սարերն ի վեր.  
Էնքան վաղեցի, որ ելաւ հոգիս,  
Էլ իսկի տըրեխ չը մնաց հագիս:  
Նայեց Օհանը, որ Դաւթի հագին  
Ոտնաման չի էլ մընացել կարգին,  
Մահակն էլ մաշւել, կէս տեղն է հասել,  
Մի օրուայ միջում էնքան է վաղել:  
— Դաւթիթ ջան, ասաւ, էդ շատ է դըժար.  
Նետ-աղեղ եմ ես շինել քեզ համար,  
Նետ-աղեղլուդ առ, գընա, որս արա,  
Ման արի ազատ սարերի վըրայ:  
— Ա-իս, հօրեղբայր, ինչ լաւ է հա,  
Ազատ շըրջել սարի վըրայ,

\* ) ՏԵՌ Մուլը № 2.

Պայծառ օդում,

Թարմ արօտում:

Լէն ու արձակ ապրել, շընչել,

Վաղել, որսալ, խաղեր կանչել

Սարի լանջին,

Ամպի միջին:

Խընդալով առաւ աղեղն Օհանից,

Հեռացաւ քաղքից, քաղքի սահմանից

Ու գարձաւ որսկանն Գնաց, մի կորկում

Լոր էր ըսպանում, ճընճղուկ էր գարկում,

Մըթանը գընում իրեն հօր ծանօթ

Աղքատ, անորդի մի ծեր կընկայ մօտ,

Կըրակի կողքին

Երկար, ահագին

Մեկնըւում,

Քընում:

Մի օր էլ՝ երբ որ իր որսից գարձաւ,

Պառաւը վըրէն սաստիկ բարկացաւ.

—Վայ, Պաւիթ, ասաւ, մահըս տանի՛ քեզ,

Դու պէտք է էն հօր զաւակը լինե՞ս.

Զեռից ու ոտից ընկած մի ծեր կին,

Ես եմ ու էն արտն Աստրծու տակին.

Ընչը ես գընում տափում, տըրորում,

Իմ ամբողջ տարուան ապրուստը կըտրում:

Թէ որսկան ես դու, նետաղեղոդ առ,

Մըծմակայ գըլիսից մինչև Մեղանսար

Քու հէրը ձեռին մի աշխարհ ունէր,

Որսով մէջը լի որսի սար ունէր,

Եղնիկ կայ էնտեղ, այծեամ ու պախրայ,

Կարծղ ես—գընա, էնտեղ օրս արաւ

—Ի՞նչ ես, այ պառաւ, էլ ինձ անիծում,

Ես ջահիլ եմ գեռ, ես նոր եմ լըսում.

Ո՞րտեղ է հապա սարը մեր որսիւ

—Գընա, հօրեղբայրդ—Օհանը կ'ասիւ

## IX

Հօրեղբօր շեմքում միւս օրը ծէքին  
 Դաւիթը կանգնեց՝ աղեղը ձեռքին.  
 — Հօրեղբայր Օհան, ընչի չես ասել,  
 Իմ հէրը որսի սար է ունեցել,  
 Այժեամ կայ Էնտեղ, եղջերու, կըխտար.  
 Վեր կաց, հօրեղբայր, տար ինձ որսասար.  
 — Վայ, կանչեց Օհան, էդ քու խօսքը չէր.  
 Էդ ով քեզ ասաւ, լեզուն պապանձուէր...  
 Էն սարը, որդի, գընաց մեր ձեռից,  
 Էն սարի որսն էլ գընաց էն սարից,  
 Էլ չը կան այժեամ, եղջերու, կըխտար.  
 Քանի լուսեղէն քու հէրը դեռ կար,  
 Էյ գիտի, օրեր, ախ, ուր էք կորել,  
 Ես շատ եմ էնտեղ որսի միո կերել...  
 Քու հէրը մեռաւ, Աստուած խըռովեց,  
 Մըսրայ թագաւոր զօրքեր ժողովեց,  
 Եկաւ, մեր երկիր քարուքանդ արաւ,  
 Էն սարի որսն էլ թալանեց, տարաւ,  
 Եղնիկը գընաց, եղջերուն գընաց...  
 Մեր գիրն էլ հալբաթ էսպէս էր գըրուած...  
 Անցել է, որդի, քու բանին գընա,  
 Մըսրայ թագաւոր ձէնդ կիմանայ...  
 — Մըսրայ թագաւոր ինձ ի՞նչ կ'անի որ...  
 Ես ի՞նչ եմ հարցնում Մըսրայ թագաւոր.  
 Մըսրայ թագաւոր թնդ Մըսրը կենայ,  
 Իմ հօր սարերում ի՞նչ գործ ունի նա:  
 Վեր կաց, հօրեղբայր, նետաղելըդ առ,  
 Կապարձըդ կապիր, գլնանք որսասար:  
 Ելաւ Օհանը ճարը կըտըրուած.  
 Գընացին տեսան՝ էլ ի՞նչ որսասար.—  
 Անտառը ջարդած, պարիսպն աւերած,  
 Բուրդերը արած գետնին հաւասար...

## X

Դիշերը հասաւ, մընացին էնտեղ:  
 Զէնով Օհանն էր. իր նետն ու աղեղ  
 Դըրաւ գըլխի տակ, հանդիսա իըռըմփաց.  
 Դաւիթը մընաց մըտքի ծովն ընկած:  
 Մին էլ նըկատեց, որ մութը հեռւում  
 Մի թէժ, փայլիբլուն կըրակ է վառւում:  
 Էն լուսը բըռնած՝  
 Վերկացաւ, գընաց,  
 Գընաց ու գընաց, բարձրացաւ մի սար,  
 Բարձրացաւ, տեսաւ մի մեծ մարմար քար  
 Կիսից պատըռուած,  
 Ու միջից՝ վառուած  
 Բըխում է լուսը պարզ, քուլա-քուլա,  
 Բարձրանում, իջնում ետ քարի վըրայ:  
 Վար իջաւ Դաւիթ էնտեղից կըրկին,  
 Վար իջաւ, կանչեց ձէնով Օհանին:  
 —Ե՛լ, հօրեղբայր, քանի՞ քընես,  
 Ե՛լ, էն պայծառ լուսը մի տես:  
 Լուս է իջել բարձրը սարին,  
 Բարձրը սարին, մարմար քարին,  
 Ե՛լ, հօրեղբայր, անուշ քընից,  
 Էն ինչ լուս է բըխում քարից:  
 Ելաւ, խաչ քաշեց Օհանն երեսին.  
 —Ե՛յ, որդի, ասաւ, մեռնիմ իր լուսին,  
 Էն մեր Մարտիւայ սարն է զօրաւոր:  
 Էն լուսի տեղը կանդնած էր մի օր  
 Սասմայ ապաւէն, Սասմայ պահապան  
 Մեր սուրբ Տիրամօր վանքը Զարխափան:  
 Մըշտական, երբ որ կըռիւ էր գընում,  
 Էնտեղ էր քու հէրն իր աղօթքն անում:  
 Քու հէրը մեռաւ, Աստուած իըռովեց,  
 Մըսրայ թագաւոր զօրքեր ժողովեց,

Մեր վանքն էլ եկաւ քանդեց էն սարում,  
 Բայց գեռ սեղանից լուս է բարձրանում:  
 Դաւիթն Օհանից էս որ իմացաւ,  
 Խաչ հանեց դէմքին.—Հօրեղբայր, ասաւ,  
 Անոնց հօրեղբայր, աշխարքի վըսայ  
 Հէր չունիմ, գու ինձ հէրութիւն արաւ,  
 Էլ չեմ իջնիլ ես Մարութայ սարից,  
 Մինչև չը շինեմ էն վանքը նորից:  
 Քեզանից կ'ուզեմ հինգհարիւր վարպետ,  
 Հինգհազար բանուոր մըշակ նըրանց հետ,  
 Որ գան, էս շաբաթ կանգնեն ու բանեն,  
 Առաջուան կարգով մեր վանքը շինեն:  
 Գընաց Օհանը ու բերաւ իր հետ  
 Հինգհազար բանուոր, հինգհարիւր վարպետ:  
 Վարպետ ու բանուոր եկան, կանգնեցին,  
 Չըրլ'իկ հա թըրլ'իկ, նորից շինեցին,  
 Առաջւան կարգով, փառքով փառաւոր  
 Բարձըր Մարութայ վանքը Տիրամօր:  
 Ցրուած միաբանք ետ նորից եկան,  
 Նորից թընդացին աղօթք, շարական.  
 Ու երբ չէն արաւ հօր վանքը նորից,  
 Վար իջաւ Դաւիթ Մարութայ սարից:

## XI

Համբաւը տարան Մըսրայ Մելիքին.  
 —Հապա չես ասիլ՝ Դաւիթը կըրկին  
 Հօր վանքը շինել, իշխան է դառել,  
 Դու օխտը տարուան խարջը չես առել,  
 Մելիք զայրացաւ.  
 —Գընացէք, ասաւ,  
 Բադին, կողբադին,  
 Սիւդին, Զարխադին,  
 Մասմայ քար ու հող տակն ու վեր արէք,  
 Իմ օխտը, տարուան խարաջը բերէք.

Քառսուն կոյս աղջիկ բերէք արմաղան,  
 Քառսուն կարճ կընիկ, որ երկանք աղան,  
 Քառսունն էլ երկար, որ ուղտեր բառնան,  
 իմ տանն ու գըռան զարաւաշ դառնան:  
 Ու Կողբագին առաւ զօրքեր:  
 —Գըլվիս վըրայ, ասաւ, իմ տէր.  
 Գընամ հիմի քանդեմ Սասուն,  
 Կանայք բերեմ քառսուն-քառսուն,  
 Քառսուն բեռնով գեղին ոսկի,  
 Տեղը ջընջեմ Հայոց ազգի:  
 Ասաւ, Մըրայ աղջիկ ու կին  
 Պար բըռնեցին ու երգեցին.  
 —Մեր Կողբագին գընաց Սասուն՝  
 Կանայք բերի քառսուն-քառսուն,  
 Քառսուն բեռնով ոսկի բերի,  
 Մեր ճակատին շարան շարի,  
 Կարմիր կովեր բերի կըթան,  
 Գարնան շինենք եղ ու չորթան.  
 Զան Կողբագին, քաջ Կողբագին  
 Սասմայ Դաւթին զարկեց գետին...»  
 Ու Կողբագին փըքուած, ուռած,  
 —Ենորհակալ եմ, քոյրեր, —գոռաց, —  
 Մինչև գալըս դեռ համբերէք,  
 Է՞ն ժամանակ պիտի պարէք...

## XII

Էսպէս երգով,  
 Զոռով, զօրքով  
 Գոռ Կողբագին մըտաւ Սասուն.  
 Օհան լըսեց, կապուեց լեզուն.  
 Աղ ու հացով,  
 Լաց ու թացով  
 Առաջն ելաւ,  
 Խընդիրք արաւ.

—ինչ որ կուզես, առ, տար, աման,  
 Վարդ աղջիկներ, կանայք Սասման,  
 Դառը դադած դեղին ոսկին,  
 Միայն թէ գթա մեր խեղճ ազգին,  
 Մի կոտորիր, մի տար մահու.  
 Վերև՝ Աստուած, ներքեւ՝ դու...  
 Ասաւ, բերին շարան-շարան  
 Վարդ աղջիկներ, կանայք Սասման.  
 Ու Կողբադին կանգնեց, ջոկեց,  
 Մարագն արաւ, դուռը փակեց,  
 Քառսուն կոյս աղջիկ սիրուն, արմաղան,  
 Քառսուն կարճ կընիկ, որ երկանք աղան,  
 Քառսուն էլ երկար, որ ուղտեր բառնան,  
 Մըսրայ Մելիքի դարաւաշ դառնան.  
 Դէզ-դէզ կիտեց դեղին ոսկին.  
 Սև սուգ կալաւ Հայոց աղգին:

## XIII

Հէյ, ուր ես, Դաւիթ, Սասմայ պահապան,  
 Քարը պատուի, դնւրս արի մէյդան:  
 Քանդած հօր վանքը որ շինեց նորից,  
 Վար իջաւ Դաւիթ Մարութայ սարից,  
 Ժանդոտած, անկոթ մի շեղբիկ գըտաւ,  
 Դընաց, պառաւի շաղգամը մտաւ:  
 Պառաւն էր, եկաւ՝ անէծք, աղաղակ.  
 —Վայ, խելառ Դաւիթ, շաղգամի տեղակ  
 Դու կրակ ուտես, ցաւ ուտես, տաւ,  
 Քու աչքն աշխարքում մենակ ինձ տեսաւ  
 Կորեկըս արիր գետնին հաւասար,  
 Էս էր մընացել ձրմեռուան պաշար,  
 Էս էլ կըտրում ես:  
 Էլ մնց ապրեմ ես:  
 Թէ կըտրիճ ես դու, աղեղք առ, գնա,  
 Քու հօր աշխարքին տիրութիւն արա,

Քու հօր գանձը կեր,  
 Թողել ես անտէր,  
 Մըսրայ թագաւոր զըրկել է՝ տանիւ  
 —ել ինչ ես վըրէս բարկանում, նանի,  
 Եդ ինչ ես ասում, ես չեմ հասկանում.  
 Մըսրայ թագաւոր մեր ինչն է տանում.  
 —Մըսրայ թագաւոր մեր ինչն է տանում...  
 Մըսրայ թագաւոր քու աչքն է հանում,  
 Դանդալօշ Դաւիթ. զըրկել է հըրէն,  
 Եկել են Սասմայ քաղաքի վըրէն  
 Բաղին, Կողբաղին,  
 Սիւդին, Զարխաղին,  
 Թալան են տալի բովանդակ Սասում,  
 Թառսուն բեռ ոսկի խարաջ են ուզում,  
 Թառսուն կոյս աղջիկ սիրուն—արմաղան,  
 Թառսուն կարճ կլնիկ, որ երկակք աղան,  
 Թառսուն ել երկար, որ ուզտեր բառնան,  
 Մըսրայ Մելիքին զարաւաշ դառնան.  
 —Ի՞նչ ես, այ պառաւ, ել ինձ անիծում.  
 Դու ինձ էն ասա, որտեղ են ուզում:  
 —Ո՞րտեղ են ուզում... մահըս տանի քեզ,  
 Դու պէտք է էն հօր զաւակը լինես...  
 Եկել ես՝ էստեղ շաղգամ ես լափում,  
 Ոսկին Կողբաղին ձեր տանն է շափում,  
 Աղջիկներ փըլեկ մարագն են լցրած:  
 Դաւիթն էր. լսեց, վերկացաւ, դընաց:  
 Տեսաւ, Կողբաղին իրենց տան միջին  
 Զափում է ոսկին թեղած առաջին,  
 Սիւդին, Զարխաղին պարկերն են բռնել,  
 Զէնով Օհանն էլ շըլինքը ծըռել,  
 Կանգնել է հեռու, ձեռները ծոցին:  
 Տեսաւ, աչքերը արնով լըցուեցին:  
 —Վերկաց, Կողբաղին, հեռու կանգնիր դու,  
 Իմ հօր ոսկին է, ես եմ շափելու:  
 —Է՛յ ձէնով Օհան, ասաւ Կողբաղին,

Դէնը կորցըրու էս խելառ գեադին։  
Էս ասելն էր հէնց.

Դաւիթն էր. հանդարտ թեկիցը բըռնեց,

Դէնը շըպըրտեց, ասես թէ մի հաւ,

Ու ինքը չօքեց, շափը կործ արաւ,

Մի քանի ոսկի ածաւ ետեին,

Հարթիչը առաւ,

Քլսեց ու էն էլ ողջ թափեց գեադին.

—Էս մէկ, Կողբադին.

Խընդաց ու դատարկ շուռ տուաւ պարկում,

Զափած ոսկին է իբրև դատարկում։

Կողբադին ասաւ.—Էյ Զէնով Օհան,

Կը տաս, տնեւր խարջը էս օխոը տարւան,

Թէ չէ կը գընամ, արեւս վրկայ,

Մըսրայ Մելիքին կը պատմեմ, կը գայ,

Զեր Սասմայ երկիր քարուքանդ կ'անի,

Տեղը կը վարի, բօստան կը ցանի։

Դաւիթ բարկացաւ, կօտը շըպըրտեց,

Տուաւ Կողբադինի գըլուխը ջարդեց։

—Կորէք, գընացէք, ասաւ, մեր հողից,

Թէ չէ որ հիմի վերկացայ տեղից,

Զեր մնծ կըտորը ականջը կ'անեմ,

Զեր հողն ու մոխիրն երկինք կը հանեմ,

Ո՞ւմ էք դուք եկել տախս ոտի տակ,

Մեռած էք կարծում դուք մեզ, թէ շուաք...

Ու ելան, թափած ոսկին թողեցին,

Սասմայ աշխարքից փախան, գընացին

Բադին, Կողբադին,

Միւդին, Զարխադին,

#### XIV

—Վայ-վայ, հօրեղբայր, ինչ ասեմ ես քեզ.

Մենք ունինք էստեղ դեղին ոսկու դէզ,

Դու անում ես ինձ քաղքի նախրապան,

Դու թողել ես ինձ օտարի դըռան...  
—Հօրեղբայրն ասաւ.—այ խենթ, խելագար,  
Ոսկին պահել եմ Մելիքի համար,  
Որ քաղցրը լինի աչքը մեզ վըրայ.  
Զը տուիր, հիմի որ զօրք առնի, գայ,  
Սասմայ քար ու հող հեղեղի, տանի,  
Ո՞վ գէմը կ'երթայ, ո՞վ կըռիւ կ'անի։  
—Դու կաց, հօրեղբայր, թող գայ, ես կ'երթամ,  
Կ'երթամ ես նըրան պատասխան կըտամ։  
Ու մութ մարագի դըռանը զարկեց,  
Փակած աղջիկներ հանեց, արձակեց.  
—Գընացէք, ասաւ, աղատ ապրեցէք,  
Սասունցի Դաւթին արև խնդրեցէք։

## XV

Էսպէս ջարդուած, արիւնլուայ  
Փախան, ընկան հողը Մըսրայ  
Բագին, Կողբագին,  
Սիւդին, Զարխագին։  
Մըսրայ կանայք հեռուից տեսան,  
Հեռուից տեսան, ուրախացան  
Ու ծափ տուին կըտերներին.  
—Եկան-եկան, բերին-բերին...  
Հէնց մօտեցան, նըկատեցին,  
Ծափ ու խընդում ընդհատեցին,  
Քըրքըշացին  
Ու կանչեցին.

—Եյ Կողբագին մեծաբերան,  
Եդ որտեղից լերան-լերան,  
Լերան-լերան կը գաս փախած,  
Հաստ գըլուխըդ կիսից ճըղած։  
Են դու չասիր՝ գընամ Սասուն,  
Կանայք բերեմ քառսուն-քառսուն,  
Քառսուն բեռնով ոսկի հանեմ,

Հայոց երկիր առեր անեմ։  
 Ու Կողբագին խիստ բարկացաւ。  
 — Սնու կացէք դուք, լըրբեր, ասաւ.  
 Զեր մարդիկն էք տեսել դուք դեռ,  
 Դուք չէք տեսել Սասմայ ծըռեր.  
 Սասմայ ծըռեր լերան-լերան,  
 Նետեր ունին միւմի գերան.  
 Սասմայ երկիր քար ու կապան,  
 Դըժար սարեր, ձոր ու ծապան։  
 Նրանց խոտեր ինչպէս կեռ թուր,  
 Զօրք ջարդեցին երեք հարիւր։  
 Ասաւ ու էլ չ'առաւ դադար,  
 Վըռազ-վըռազ, դըլիսապատառ  
 Վազեց իրեն թագաւորին։  
 Խընդաց թագւորն իր աթոռին։  
 — Ապրիս, ապրիս, քաջ Կողբագին։  
 Արժէ՝ կախեմ ես քու ճըտին  
 Մեր զուզզունի մեծ նշանը,  
 Պարգև քու մեծ յաղթութեանը։  
 Ո՞ւր են, հապա առաջըս բեր  
 Սասմայ ոսկին ու աղջիկներ։  
 Ասաւ Մելիքն, ու Կողբագին  
 Գըլուխ տուաւ մինչև գետին։  
 — Ապրած կենաս, մեծ թագաւոր,  
 Զօռով փախայ ես ձիաւոր,  
 Ո՞նց բերէի Սասմայ ոսկին։  
 Մի խենթ ծընտեց Հայոց ազգին,  
 Ոչ ահ գիտի, ոչ տէր ու մեծ,  
 Գըլուխս էսպէս տուաւ, ջարդեց.  
 Զեմ տալ, ասաւ, իմ հօր ոսկին,  
 Զեմ տալ կանայքն իմ հայ ազգին,  
 Սասմայ երկիր ձեզ տեղ չը կայ։  
 Քու թագաւոր, ասաւ, թնդ դայ,  
 Թնդ դայ, ինձ հետ կըռիւ անի,  
 Թէ զոշազ է, զօռով տանի։

Կատաղեց, փրփրեց Մըսրայ թագաւոր։  
 —կանչեցէք, ասաւ, իմ զօրքը բոլոր։  
 Հազար հազար մարդ նորելուկ մանուկ,  
 Հազար հազար մարդ անբեղ, անմօրուք,  
 Հազար հազար մարդ բեղը նոր ծրլած,  
 Հազար հազար մարդ նոր թախտից ելած,  
 Հազար հազար մարդ թուխ միրուքաւոր,  
 Հազար հազար մարդ սիպտակ ալեոր,  
 Հազար հազար մարդ, որ փողեր հընչեն,  
 Հազար հազար մարդ, որ թըմիուկ զարկեն.  
 Կանչեցէք, թող գան, հագնեն զէնք-զըրահ,  
 Կըռիւ տի գընամ ես Դաւթի վըրայ,  
 Սասունն աւերեմ,  
 Հեղեղեմ, բերեմ

## ՅՈՎ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

(Կը շաբոնակուի)